

20 ՓԱՐՍ

20 ՓԱՐՍ

Ղ-էն Բ-ըն Ե-ն Կ-ն Լ-ն Դ-ն
Ֆ Ի Ե Ս Դ Լ Դ
Ս-էն Ե-ն Մ-էն Դ-ն Դ-ն 8
Ա-ն Ե-ն Դ-ն Դ-ն 4
Բ-ն Ե-ն Դ-ն Դ-ն Դ-ն Դ-ն

Ս-ն Ե-ն Դ-ն Դ-ն Դ-ն Դ-ն
Դ-ն Ե-ն Դ-ն Դ-ն Դ-ն Դ-ն
Դ-ն Ե-ն Դ-ն Դ-ն Դ-ն Դ-ն
Դ-ն Ե-ն Դ-ն Դ-ն Դ-ն Դ-ն

Մանկունի Էջիմար

13.02 ԱՎՈՍՏՈՍ 17

ՍՍԼԸ ԻՄՊՐԻՆՏ ԿՈՐԹՈՍ 8 ՓԱՆՈՍԵԱՆ

13.02 ՁԻՆԻՃԷ 21

ԱՋԳԱՅԻՆ

Վեհ. Կաթողիկոս հաղթել էր թա-
րափրնաւն, Ամեն. Յարութիւն Սըր-
բաղան հաղթել էր ինն Երուսաղէմ
Փաթրիկ լիւթիւն իւն, Գեոր. Սիմէօն
սրբազաննա Տեղապահ լիւթիւն իւն
մէջնունիւն թէպէր զլիւթիւն տան
պաշտ, Տեղապահ Սրբազան, արք-
պիկոպոս լիւթիւն տէրէն լի թիւր շէրէ-
ֆի տախի ի թա պոլսր լիւթիւն տուր:

Մա մէջնունիւն խապէր վերելի
քի, չարչեմիւն կիւնիւ, սաաթ Կոտե,
Ամեն. Երուսաղէմ Պատրիարք հաղ-
թել էր ինն Գեոր. Տեղապահ սրբա-
զան հաղթել էր պոլսր լիւթիւն լիւթիւն
հալտե, միւնէտտէտէն ինչա օլունա-
ճադ օլան Աղգային Հիւանդանոցուն
թէմէլի աթիւմադ լիւթիւն ինն ինն
օլունաճադ տուր:

ԿՈՆԴՍԿ

Փաթիա հաղթել էր թաւափրնաւն
կէլիւն օլունապտ, տալիւն մա-
գաւմնաւն պիւրիմ Փաթրիարք տէտէտէ
տախի կէտտէրիւն օլան կոնդալիւն
պիւր զլիւթիւն, ճիւմաւ իրիւթիւն կիւ-
նիւ հէր նէ գատար տէրճ ու պէտան
ի թիւն ինն տէ, պաղը զաթիւրն
հէփսինն պիւր նիւսիւտէ տէրճինն
արգու իյէտիւթիւն կէօրտիւն
միւնգուն, մէջիւր արգու լիւթիւն պոլ-
սիւն ինն ինն ի թիւն լիւթիւն, վէ եարն
տա ճէվապուն միւնալիւթիւն ինն ինն
կիւթ տուր:

Մէջիւր կոնդալիւն, կէրչի պիւթ-
թապի պիւր չոգ զաթիւր թիւր լիւթիւն
թէրճիւն ինն արգու ինն լիւթիւն ի-
սէ տէ, վերիւն ճէվապտ, թէր-
միւն մալի մալալիւն օլունալիւն
տան, օլապապտ չոգ լիւթիւն ճէվալիւն
կէօրմէմիւն տուր:

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐՅ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԵՏՐՈՍ Ժ.

ՊԱՏՐԻԱՐԻԿ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՐԿԵՊԻՍԿՈՍՈՍ ԵՒ ԵՊԻՍԿՈՍՈՍ

ԵՒ

Սիրեցեալ Որդւոյ, Կղերց եւ Միանձանց

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԻՅԱՆ

Որք ի շնորհս եւ ի հաղորդութեան

Առաքելական Աթոռոյ

ԼԵՒՈՆ

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԺԳ.

Պատուական Եղբարք եւ Սիրեցեալ
Որդիք, Ողջոյն եւ Առաքելական Օրհ-
նութիւն:

Հայրական սէրն, որով համօրէն Տէ-
րունական հօտը կ'ընդգրկեմք, այն-
պիսի զօրութիւն եւ բնութիւն ու-
նի, որ քրիստոնէայ աշխարհին ամեն
կողմն եթէ ուրախալի եւ եթէ տըրտ-
մալի ինչ որ հանդիպի, այն ամենը
քրիստոնէային կը զգամք եւ հանապաղ

անոնց կը մանակցեմք: Վասն որոյ,
ինչպէս յառաջ Մեր սիրան խորապէս
եւ երկար ժամանակ ցաւած էր, վա-
սըն զի Հայ ժողովրդին համար, մա-
նաւանդ Կոստանդնուպոլսոյ քաղաքին
մէջ, Ձեր եղբայրական միութենէն
բաժնուած էին, այսպէս ալ այժմ
յատուկ ուրախութեամբ զեղեալ եմք,
որուն մեծաւ եռանդեամբ կ'սպասե-
լինք, վասն զի շնորհիւն Աստուծոյ
այն տարածայնութիւն բարեբաղդա-
բար վերջացաւ: Արդ՝ մինչ ձեր մէջ
վերահաստատուած միաբանութեան
եւ խաղաղութեան համար Ձեզ Մեր
ուրախակցութիւնը կը յայտնեմք,
չեմք կարող զՁեզ մեծապէս յորդո-
րելէ ետ կենալ, որպէս զի Աստու-
ծային բարութեան այս մեծ պար-
գելը նախանձայնութեամբ պահ-
պանելու եւ աճեցնելու համար ա-
մեն ջանք ի գործ դնէք: Եւ որպէս
զի կարենաք զայս ի ձեռս բերել,
այսինքն կ'օրհնեմք վերաբերեալ իրաց
մէջ մտաց եւ սրտի միութիւնը, հարկ
է զի ամենքդ ալ, որպէս կ'ընէք, առ
այս Ս. Աթոռ հնազանդութեան մէջ
հաստատուապէս յարատեւէք, եւ Դուք
Սիրեցեալ Որդիք, հաւատարմաբար
հլու եւ հնազանդ ըլլաք Ձեր Պատ-
րիարքին եւ միւս այլ Հովուաց, որք
օրինաւորապէս ձեզ վերակացու են,
եւ որովհետեւ հասարակային իրաց
մէջ հանդիպած տարածայնութիւն-
ներն եւ առանձնական գործոց մէջ
եղած գծաւորութիւններն ստեպ աոյն
այս կրօնական միութիւնը պարտա-
տելու առիթ կ'ընծեւեն, վասն որոյ
առաջինները ձեզմէ հեռացնէ պիտի
ձեր առ Վեհապետն Օսմանեան Կա-
թողիկոսն ունեցած հաւատարմիւ
եւ մեծապայծառ օրինապահութիւն
եւ հպատակութիւնն, այն Վեհա-
պետին՝ Որուն արդարաւորութիւնն,
խաղաղութեան պահպանութեան հա-
մար տաժած փոյթ եւ ջանքն, եւ
Մեր նկատմամբ ունեցած բարեացա-
կամ զգացմունքն Մեզ քաջ ծանօթ
են, եւ շքեղ ապացոյցներով իսկ
հաստատեալ: Իսկ առանձնական
գծաւորութեանց զալով, հնար է զա-
սոնք դիւրին եղանակաւ ձեզմէ ան-
հետացնել, եթէ Երանելոյն Պօղոսի
հեթանոսաց Առաքելոյն կատարեալ
եղբայրութեան նկատմամբ սոր-
վեցուցածը միշտ ձեր մտաց մէջ տը-
պաւորած ըլլաք, եւ ի գործ դնէք,
«Սէր երկայնամիտ է, քաջքրանայ,
սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւա-
ճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի,
ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խոր-
հի զչար» (Ա. Կորնթ. ԺԳ. 4-5):

Իսկ այս առիթ եւ կատարեալ հա-
մաձայնութիւնն ձեզ ուրիշ բարեք
ալ պիտի արդիւնաւորէ: Այսինքն
ինչպէս ըսինք, նոյնով պիտի կարե-
նաք վերահաստատեալ միաբանու-
թեան եւ խաղաղութեան պտուղնե-
րը աճեցնել եւ տարածել: Վասն զի
այդ համաձայնութիւնն ձեր վրայ
պիտի գրաւէ այլոց իսկ հայեցումա-
քը եւ մտադրութիւնը, որք՝ թէ-
պէտեւ ձեզի հետ հաւասար ծագու-
մէն եւ անունը ունին, սակայն տա-
կաւին Մեզմէ եւ ձեզմէ կը տարա-
ձայնին, եւ այն Սուրբ Փարախին
ցանկին մէջ, որոյ Մեք գերագոյն
Հովիւն եմք, չ'են պարունակիր: Արդ՝
ասոնք ձեր եղբայրութեան եւ մի-
աբանութեան օրինակները տեսնե-
լով, դիւրաւ պիտի իմանան թէ, Յի-
սուսի Քրիստոսի հոգին կը տիրէ ձեր
մէջ, որ մի միայն կարող է իրենները
այնպէս միայնել իրենց հետ, որպէս
զի մի մարմին ըլլան: Աստուած ապ
որ խելամուտ ըլլան, եւ որոշեն վե-
րահաստատել այն միութիւնը՝ յորմէ
իրենց նախնիքն հեռացան: Այս բանս
երբ իրանայ, անշուշտ իրենց համար
մեծ մխիթարութիւն պիտի պատճա-
ռէ: Վասն զի Մեր եւ ձեր հետ մի-
ացեալ ըլլալով, մի եւ նոյն ատեն
միացեալ պիտի հանդիսանան նաեւ
այլ հաւատացեալ, որք Կաթողիկոսայ
անուամբ յընդհանուր տիեզերս սրբ-
ուեալ են, եւ խելամուտ պիտի թէ՛
խորհրդական Սիովնի խորաններուն
ապաւինած են, որում միայն Աստ-
ուածային խոստմամբ տուեալ է իւր
վրանները կանգնել եւ իւր ապա-
ւանդակները երկայնել աշխարհիս ա-
մեն կողմն:

Արդ, Պատուական Եղբարք, Դուք
որ Հայ վիճակներու վերակացու էք,
եւ ինչպէս քաջ գիտեմք, թէ յոր-
դորելու մասին մէջ նախանձ, եւ թէ՛
համոզելու մասին մէջ գիտութիւն ու-
նիք, Դուք պարտաւոր էք բոլոր ու-
ժով աշխատելու, որպէս զի այս փա-
վաքեալ միութիւնը վերահաստա-
տուի: Նա մանաւանդ կ'ուզեմք որ
Դուք, յանուն Մեր եւ Մեր խօսքովն
առ այն զնոսա հրաւիրէք. քանզի ան-
պատեհ չէ, մանաւանդ թէ մեծա-
պէս վայելուչ է որ Հայրն մեկուսա-
ցեալ եւ երկար ժամանակ սպասեալ
որդիքը հայրենի յարկին տակ կոչէ,
եւ տարածեալ բազմօք վերադարձ-
եալները դիմաւորէ զանոնք ընդ-
դրկելու համար, եւ չեմք կարծիք
թէ ձեր խօսքերն եւ յորդորներն ի
գերեւ ելաննու: Բարի ելից յոյս կու-
տան Մեզ՝ նախ Աստուծոյ առ ամենայն
ազգս անհուն ողորմութիւնն եւ ապա
նոյն իսկ Հայ ժողովրդեան հեղամը-
տութիւնն եւ հանձարն: Թէ որչափ
նոյնն միտեալ է ճշմարտութիւնը ըն-
դունելու, երբ զայն ճանչայ, եւ
որչափ միութեան տրամադրեալ է,
երբ իմանայ թէ անկից հեռացած է,
պատմութեան բազմաթիւ ապացոյ-
ցերով հաստատեալ է: Նոյն իսկ ա-
նոնք, որք եկեղեցական պաշտամունք-
ները ձեզմէ զատ կը վարեն, կը պար-
ժին թէ Հայ ազգն Քրիստոսի հա-
ւատքը սորված է ի Գրիգորէ, որ էր
այր սրբակրօն եւ մակաւնութեալ Լու-
սաւորիւն, եւ զոր իրենք եւս յատուկ
պաշտամամբ կը մեծարեն իրենւ Հայր
եւ պաշտպան: Եւ իրենց իրենւ յի-
շատակաց արժանի բան մի եղած է
անոր ի Հռովմ ըրած ճանապարհոր-
դութիւնն, որպէս զի Սրբոյն Սիդ-
րուստոսի Ծայրագոյն Քահանայապե-
տին իւր հաւատոց հաւաստիքը ներ-
կայացնէ, եւ իւր հնազանդութիւնը
մատուցանէ: մանաւանդ համբաւեալ

իսկ է, թէ նոյն Քահանայապետն
մեծ մարդասիրութեամբ ընդունաւ,
եւ այլ եւ այլ յատուկ իշխանութեամբ
ճոխացեալ է: Եւ բազմաթիւ Հայրա-
պետք, որք այնուհետեւ Հայաստան-
կայց եկեղեցին հովուեցին, Առաքե-
լական Աթոռոյն նկատմամբ նոյն հոգ-
ւով տողորեալ էին ինչպէս Սուրբն
Գրիգոր, եւ այս յայտնապէս կը տես-
նուի իրենց նամակներէն, իրենց ի
Հռովմ ըրած ուխտագնացութիւննե-
րէն եւ մանաւանդ Սիւնհոդոսական
վճիռներէն: Եւ արդարեւ մեծապէս
յիշատակութեան արժանի են այն
խօսքերն, զորս Սոյ ժողովոյն մէջ, որ
1307 տարին գումարեցաւ, Հայաս-
տանայց Հայրք առ այս Առաքելա-
կան Աթոռ հնազանդութեան պար-
տաւորութեան մասին վճռեցին: «Քան-
զի որպէս մարմին հնազանդի գլխոյն,
նոյնպէս ընդհանուր եկեղեցին, որ է
մարմին Քրիստոսի, հնազանդել պարտ
է նմա, որ գլուխ ի Քրիստոսէ հաս-
տատեցաւ համօրէն եկեղեցւոյ:» Որ
եւ նաեւ Աստուծոյ ժողովոյն մէջ, որ
նոյն դարուն վերջաւաններով տա-
րին գումարեցաւ, վերահաստատե-
ցաւ եւ ընդարձակագոյն միկնուե-
ցաւ: Ձեզ անձնօթ չէ նաեւ, միւս
նուազ կարեւորները զանց ընելով,
ինչ որ Փնորհնտեան ժողովոյն մէջ տե-
ղի ունեցաւ, ուր՝ երբ Կոստանդնու
Կաթողիկոսին պատգամաւորներն հա-
սին, եւ Մեր նախորդ Եղբայրն Դ. ինն
իրենւ Քրիստոսի Փոխանորդին իրենց
յարդուութիւնը մատուցին, ըսին թէ,
«Եկեալ եմք առ Դուք մեր, եկեալ
եմք առ Հովիւդ, Դու ես վէմ Ե-
կեղեցւոյ:» Եւ աղաչեցին որպէս զի
Դուք անդամօց վրաց վրասից ըլ-
լայ, հովիւն հօտը ժողովէ, հիմն
ընկեղեցին հաստատէ (1), եւ իրենց
հաւատոյ դաւանութիւնը ընծայելով
աղաչեցին ըսելով թէ, «Եթէ պակաս
իցէ, ուսո՛ր:» Յայնժամ Քահանայա-
պետն հրատարակեց սիւնհոդոսական
հրահանգագիրը, որոյ սկիզբն է «Յըն-
ժայէք առ Աստուած», որով իրենց
վարդապետեց ինչ որ Կաթողիկոս վար-
դապետութեան նկատմամբ կարեւոր
տեսաւ: Պատգամաւորներն յանուն
իրենանց, եւ իրենց Պատրիարքին եւ
բոլոր Հայ ժողովրդեան յայտարարե-
ցին թէ, նոյն հրահանգագիրը հլու-
թեամբ եւ յօժարութեամբ կրնդու-
նին, «Եւ խոստանամք եւս յանուն
վեր անդր յիշատակելոց, իրենւ ճշ-
մարիտ որդիք հնազանդութեան՝ ան-
տալ հաւատարմութեամբ ամենայն օ-
րինադրութեանց եւ հրամանաց Ա-
ռաքելական Աթոռոյ:» Վասն որոյ
Կիւլիկիոյ Աղաթիա Կաթողիկոսն իւր
1585 ապրիլ 10 թուականով առ Մեր
նախորդն Գրիգոր ԺԳ. գրած թղթին
մէջ ամենայն ճշմարտութեամբ կրնէ,
«Ունիմք ահա զգիրս Մեր հնոց նախ-
նեացն, զհնազանդութիւնէ Հայրապե-
տաց:» Եւ Կաթողիկոսաց Մերոց առ
Հայրապետն Հռովմայ, որպէս էր այն
հնազանդութիւնն Սրբոյն Գրիգորի

(1) Լապպ. Հաւաք. Ս. Ժողովոյն Թա-
ւելուած Հտր. Ե. 210:

Լուսաւորչին առ Սուրբ Պապն Սեղ-
բեստրոս : Ս. յայտն է շայ ժողովրդեան
մէջ սովորութիւն եղած է , ամեն պա-
տեհ առթիւ 'ի Ս. Աթոռոյ առաք-
ուած նուիրակները ամենայն պատ-
ւով ընդունել , եւ խղճի մտօք անոր
հրամանաց անսալ :

Ապահով եմք թէ այս բաներն մե-
ծապէս պիտի ազդեն , որով Մեզմէ
տակաւին հեռու մնացողներէ շատե-
րէն պիտի համոզուին ըզիւք խնդ-
րելու որպէս զի Մեր հետ միանան ,
եւ եթէ ոմանց համար անստուգու-
թեան եւ տարտամութեան առիթ
ըլլայ այն երկիւղն , իբրեւ թէ իրենց
գործոց նկատմամբ ոչ այնչափ յօժա-
րակամ պիտի գտնեն զՍուրբ Աթոռն ,
եւ կամ թէ ոչ այն սիրով Մէզմէ պի-
տի ընդունուին , ինչպէս իրենք կը
փափաքին , ջանացէք , Պատուական
եղբարք , որպէս զի լաւ խորհրդածն
թէ Մեր նախորդք Հռովմայ Հայրա-
պետք իրենց Հայրական սիրոյն յայտ-
նի ապացոյցները երբեք Հայոց վրայէն
պակաս չ'ըլին : Արդարեւ իրենք զա-
նոնք միշտ սիրով ընդունեցան , երբ
կամ ուխտագնացութեամբ 'ի Հռովմ
եւ կամ ապաւէն գտնելու համար ի-
րենց դիմեցին . նա մանաւանդ զիրենք
ասանկանալու յարմար տեղեր պատ-
րաստել տուին , ինչպէս ծանօթ է
Գրիգոր ԺԳ. Հայագրի պատմեաց
կրթութեան եւ գաստիարակութեան
համար վարժարան մի հիմնել միտքը
դրած էր , բայց չկարողացաւ իւր
խորհուրդը կատարել , վասն զի մահն
զինքը յափշտակեց : Ուրբանոս Ը.
զայն ըստ մասին հոգաց , որ իւր կա-
ռուցած Տարածման Հաւատոյ ըն-
դարձակ վարժարանին մէջ այլ օ-
տարազգի աշակերտաց հետ Հայերը
եւս ընդունեցաւ : Իսկ Մեք , թէ-
պէտ եւ ի դժուար ժամանակս , Աս-
տուծոյ օգնականութեամբ կարող
եղանք նաեւ լաւագոյն եղանակաւ
Գրիգորի ԺԳ. ի խորհածը իրացնել .
այսինքն Հայ աշակերտաց համար
թողնութեան Սուրբ Նիկիոյայոսի՝ Ե-
կեղեցւոյն քով ընդարձակ բնակա-
րան մի հաստատեցինք , եւ կանոնա-
ւորապէս իրենց վարժարանը սահ-
մանեցինք : Այս ամէն վերոյիշեալ
գործոց մէջ միշտ հոգացինք որպէս
զի Հայ ծէսն եւ լեզուն , որ հնու-
թեամբ , գեղեցկութեամբ եւ մեծա-
հաշակ մատենագրաց թուովն փայ-
լած է , իրեն պարտ ու պատշաճ
պատուոյն մէջ պահուի , մանաւանդ
թէ շատեց ի վեր հոգացուած է ,
որպէս զի ձեր ծիսէն եպիսկոպոս մի
'ի Հռովմ հաստատուն բնակութիւն
ունենալով , 'ի Տեառնէ յեկեղեցա-
կան վիճակ կոչուած աշակերտաց
սուրբ աստիճանները տայ : Դարձեալ
Ուրբանոս վարժարանին մէջ Հայ
լեզուի դասատուութիւնն հաստա-
տեցաւ . եւ Մեր նախորդ Պիոս Թ.
հոգաց որպէս զի Հռովմէական Բա-
հանայապետական Կղերանոցի լա-
րանին մէջ ուսուցիչ մը հաստատուի
յորմէ մեր ազգի պատանիք Հայ ազ-
գին լեզուն , մատենագրութիւնը եւ
պատմութիւնը սորվիլ կարող ըլլան :

Բայց Հռովմայ Բահանայապետաց
խնամքն այս քաղաքիս սահմանե-
րուն մէջ միայն չ'ամփոփուեցան ,
քանզի ոչինչ իրենց սրտին այնչափ
սիրելի եղած է , որչափ ձեր եկե-
ղեցւոյն օգնութիւն մատուցանեն
երբ այն դժուարին հանգամանաց
մէջ կը գտնուէր , անոր ժամանակաց
դժնդակութեան հասուցած քնաս-
ները դարմանեն , եւ ամեն կարելի

օգուտ հայթայթեն : Ոչ ոք կ'ան-
գիտանայ թէ որպիսի ջանքով Բե-
նեդիկոս ԺԳ. աշխատեցաւ , որպէս
զի ձեր ծէսն , ինչպէս միւս եւս Ա-
րեւելեան եկեղեցեաց՝ անվթար սահ-
ուէր , եւ որպէս զի Հայ ուղղափառ
Կաթողիկոսաց յաջորդութիւնն յա-
թոռն Սոյո վերահաստատուէր : Բա-
շայտս եւն ձեզ խնամք եւ հոգք Լե-
ւոնի ԺԳ. ի , եւ Պիոսի Ը. ի , որպէս
զի Օսմանեան Կայսերութեան Մայրա-
քաղաքին մէջ Կաթողիկոսայ Հայք ,
ըստ օրինակի միւս ազգաց , որք են
'ի նոյն Կայսերութեան , իրեն հասա-
րակային գործոց համար իրենց տե-
սուլը ունենան : Նոր է վերջապէս
Գրիգորի ԺԳ. ի եւ Պիոսի Թ. ի գոր-
ծոց յիշատակն , որպէս զի թէ՛ ձեր
գաւառաց մէջ եպիսկոպոսական Ա-
թոռոց թիւն աւելնայ , եւ թէ՛ Կա-
թողիկոսայ Հայոց Հոգեւոր գլուխն Կ.
Պօլսոյ մէջ բարձի եւ պատուոյ արժա-
նի աստիճանը ընդունի : Որ եւ ձեռք
բերուեցաւ , նախ հոն Արք եպիսկո-
պոսական եւ նախագահական Աթոռը
հաստատուի , եւ ապա ասոր Կիւլի-
կիոյ Պատրիարքութեան հետ միու-
թիւնը վճռելով , այնու օրինօք որ
Պատրիարքին բնակութեան տեղին
Կայսերութեան Մայրաքաղաքն ըլլայ ,
եւ որպէս զի վայրաց հեռաւորու-
թիւնն չտկարացնէր այն սերտ միու-
թեան զօրը , որ Հռովմայ եկեղեցւոյ
հետ կը զուգէ Հայ Հաւատացեալնե-
րը , իմաստութեամբ սահմանեցաւ զի ,
նոյն վերոյիշեալ քաղաքին մէջ Առա-
քելական նուիրակ մը գտնուի , որ
Հռովմայ Բահանայապետը ներկայա-
ցնեն : Իսկ Մեր նկատմամբ , Դուք
վկայք էք թէ , որպիսի հոգ եւ խնամք
կը տածեմք ձեզ համար , որպէս եւ
Մեք վկայ եմք ձեր առ Մեզ սերտ
յարման , որոյ ստէպ յայտնի ապա-
ցոյցները ընդունած եմք :

Արդ , մէկ կողմէն Հայ ժողովրդ-
եան հանճարն , նախնեաց աւանդու-
թիւններն եւ անցեալ դարուց ամեն
յիշատակներն առ այս ճշմարտու-
թեան Աթոռ կը մղեն ձեզմէ բաժան-
եալ Հայերը , եւ զանոնք այնպիսի
ուժով կը յանկուցանեն , որպէս
զի այլ եւս դանդաղելու տեղի չ'ըլ-
լայ , եւ միւս կողմէն այս Առա-
քելական Աթոռս միշտ իւր ամէն
ջանք ըրած է , որպէս զի ձեր ազգը
միշտ իրեն սերտագոյնս միացեալ
պահէ , եւ զնոյն , եթէ երբէք թե-
րանայ , նորէն միութեան մէջ վերա-
հաստատէ . վասն որոյ ձեզ , Պատուա-
կան եղբարք , համոզելու , եւ Մեզ
յուսալու կարի ծանր ապացոյցներ կը
ներկայանան , որ վաղեմի միաբանու-
թիւնն կատարելապէս վերահաստա-
տուի , որ արդարեւ ձեր ազգին հա-
մար մեծ բարեաց պատճառ պիտի
ըլլայ , ոչ միայն յայնմ որ հոգւոց
յաւիտենական փրկութեան կը պատ-
կանի , այլ եւ նոյն իսկ բարօրու-
թեան եւ ամենայն ցանկալի բարւոյ
այս աշխարհիս վերայ : Ապաքէն
պատմութիւնն կը վկայէ թէ , Հայ
եպիսկոպոսաց մէջ անոնք առաւել
քան զայլս , իբրեւ լուսաւորադոյն
աստեղք փայլեցան , որք սերտիւ
Հռովմայ եկեղեցւոյն հետ միացած
էին . նմանապէս Մեզ կը վկայէ թէ ,
ձեր ազգին փառքն ամենամեծ եղաւ
մանաւանդ այն դարուց մէջ , յորս
Կաթողիկէ կրօնքն ձեր մէջ ընդար-
ձակագոյնս ծաղկեցաւ :

Եւ որպէս զի այսպիսի իրք ըստ
հասարակաց ուխտից եւ բաղձանաց
յաշողին , մի միայն Աստուծոյ կա-
խում ունի , որ զամենայն ինչ կը

կառավարէ , եւ որ զնդ որս հաճի
կոչէ , եւ զոր կամի՝ աստուածա-
պաշտ առնէ » (1) : Ուրեմն Մեզ հետ
առ Աստուած խոնարհ մաղթանքներ ,
ո՛ր Պատուական եղբարք եւ սիրեց-
եալ Որդիք , ուղղեցէք , որպէս զի
ձեր ազգին այն ամէն անհատներն ,
որք սուրբ մկրտութեամբ քրիստոնե-
ական կենաց ընկերութեան մէջ մը-
տած ըլլալով , տակաւին Մեզմէ մե-
կուսացեալ կը մնան , շնորհաց զօ-
րութեան շարժեալ եւ Մեզ հետ
միացեալ Մեր սիրտը ուրախութեամբ
լեցունեն , ըստ որում կ'ըսէ Առա-
քեալն , « Ձնոյն խորհիլք , զնոյն սե-
րանքն ունիլք , համաշունչք ,
միախորհուրդք » (Փիլիպպոս Բ. 2.)
Ձանացէ՛ք եւս , որպէս զի շնորհաց
Դահլիճ առջեւ բարեխօսէ « Փառա-
ւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս
Աստուածածին Մարիամ , մայր Գրիս-
տոսի , եւ մատուցանէ զաղաչանս մեր
Որդւոյ իւրում եւ Աստուծոյ մերոյ »
(Մաղթ. Հայաստան Ժամակարգ.)

Անոր հետ ի միասին բարեխօս ու-
նեցէ՛ք չքեղ Մարտիրոս Սուրբ Գրի-
գոր Լուսաւորիչը , որպէս զի իբրեւ
մատակարար աստուածային օգնու-
թեան իւր այնչափ աշխատութեամբ
եւ ի չարչարանս աննկուն հաստա-
տութեամբն ձեռնարկած գործոյն
լրումն եւ հաստատութիւն պարգե-
ւէ : Վերջապէս՝ Մեր ազօթից մաս-
նակցելով , զայս եւս խնդրեցէք թէ ,
Հայոց հեղաբարոյութիւնն՝ եւ իրեն
առ Կաթողիկէ միութիւնն վերադար-
ձն միւս այլ ամեն ժողովրդոց օրի-
նակ եւ յորդոր ըլլայ , որք թէպէտ
եւ զԳրիստոս կը պաշտեն , այլ ի Հռ-
ովմայ եկեղեցւոյն անջատեալ են ,
որպէս զի ասոնք եւս դառնան հոն ,
ուստի մեկեւծ են եւ ըլլայ մի հօտ
եւ մի հովիւ :

Այսպիսի ուխտիւք եւ ակնկալու-
թեամբք , Ձեզ , Պատուական եղբարք ,
եւ ձեզ ամենուդ , սիրեցեալ որդիք ,
ի գրաւական Աստուածային մարդա-
սիրութեան մեծ սիրով Մեր Առաքե-
լական օրհնութիւնը կը շնորհեմք :

Տուեալ ի Հռովմ առ Սրբոյն Պետ-
րոսի , ի 25 յուլիսի (Ն. Տ.) 1888, Մեր
Բահանայապետութեան Մեռաւան-
բորդ տարին :

ԼԵՒՈՆ ՔԱՀԱՆԱԶԱՆ ԺԳ.

Ի հաստատութիւն հաւատարմութեան
Հայերէն թարգմանութեանս ի Լատին
բնագրէ :

Բերա Կոստանդնուպոլսոյ , Կաթողիկո-
սարան 6/18 Օգոստոս 1888 :

ՍՏԵՓԱՆՈՍ ՊԵՏՐՈՍ Ժ.

ԿԱԹՈՂ. Ի ՈՍ-ՊԱՏՐԻԱՐԿ ԿԻՒԼԻԿԻՈՅ

ՏԱՍԻԼԻՑԵՆ

Ինկիլթերանն Ագ-Տէնիզ տօնան-
մար գօմանտանը վէ Ինկիլթերա
Գրալիշաւնն իբրեւ միաբանութեան
Տիւղ տ'իտիմպուրկըն հազար պուլու-
նապիլմէսի իշին , տիւնքի կիւն իճ-
րասը մուգարէր օլան Պիւլիւք-Ատա
եարըլարը փէնճէնպիսի կիւնիւնէ թէ-
էլիլ իտիլիշ տիր :

Իզմիրտէն ալընան պիր թէլէկրաֆ-
նամէնէ կէօրէ , միւշարիլէյս տիւն
սապահ Սիւրբիդ նամ զըրհը վարօ-
ըրնա ըրաքիպէն վէ Տէրասատէթէ
միւթէվէճիհէն , շէհըր մէզբիւրտէն
հարէքէթ իթմիշ տիր :

Թարաֆը էլըքէր հազրէթի Փատի-
շահիտէն միւշարիլէյսին իսթիքպա-

(1) Ս. Ամբրոս . 'ի Դուգ. գլ. Դ.

լընա թայեին պուրուլան Էտհէմ վէ
եալէրանը Փատիշահիտէն Ահմէտ
փաշալար տիւն սապահ , Իզզէտտին
վարօրը Հումանուստէն ըրաքիպէն ,
շէհրմիլիշտէն հարէքէթ իթմիլիշտէն
տիր :

Միւշարիլէյս եարն շէհրմիլիշ վա-
պըլ օլաճաղընտան , կէրէք մուվասէ-
լէթ վէ կէրէք ավտէթլէրի կիւնտիւ-
ղէ թէսատիլի իտէճէք օլուր իսէ ,
հազգլարընտա պաշաճահ մէրասիլի
թէշրիֆաթիլիէն պահրիլիէ իճրասըյ-
լա վէ գարաղօլ սէֆիլիէն Հումանու-
ստ տօնատըրպա թօփ էնտախթըյլա
լաղըմէի իճթիրամբեարի իյֆա իտի-
լէճէք տիր :

Միւշարիլէյս մուվասէլէթլէրիլի
միւթէպաղպ տօղրուճա Մապէյնը
Հումանուստ պիլ աղիմէ հուզըրը
Փատիշահիէն չըգահադ , վէ Ելլըրը
սէրանընտա պիր տախրէի մախսուէ-
տէ միւսաֆիլի Շէհրիեարի գալաճապ
տըր :

— Բէթի իտարէսինին յուլիս տեւր
զարֆընտաքի հասըլաթը 156 պին լի-
րանա պալիզ օլմուշ տուր :

— Մօնիթօրտէ օգուստուղուճա
կէօրէ , Մ. Բրէսէլէ հէյնէթի իզմիտ-
տէն էնկիլիւրիւնէ վէ անտէն տէ Եօզ-
կատա գատար 720 քիլօմէթրօ մե-
սաֆէ իւղէրիտէ պիր չըմէնտըֆէր
խաթթընն ինչասընը Հիւքիւմէթի
Սէնիլիէնէ թէքիլիթ իթմիշտիր : Մու-
մալիլէյս թէլմիլնաթ մագամընտա քի-
լօմէթրօ պաշընա 23 պին ֆրանգ թա-
լէպ իթմէքտէ տիր իսէտէ , պուլըն
Տուեուլը Ումուլիլիէ իտարէսի թա-
րաֆընտան թէպիլիէ օլըմասընը
գապուլ իթմէէօր : Մալիւմ տիւր քի
տիլիլէ հէյնէթի սէրմահէտարան քի-
լօմէթրօ պաշընա 15 պին ֆրանգ թէ-
լմիլնաթ իլէ իթմիլիթա իտիպ , պու-
մէպաղըն պիր տէվլէթ պանդարըյ-
լա թէլմիլն օլըմասընը թալէպ իթ-
մէքտէ իտիլէր : Մ. Բրէսէլին հէյնէ-
թի 720 քիլօմէթրօ ինչասընը իբմալ
իթմիլիթտէն սօնրա , թէլմիլնաթըն
սուրէթը մէմուլիէտէ իթա օլըմասընը
թագտիրտէ , Անատօլու իշէրիսինէ
4,280 քիլօմէթրօ տահա ինչասընը թէ-
ահիւտ իտիէօր :

Անատօլու չըմէնտըֆէրի մէսէլէսի
հազգընտա Մատտէթ զազէթալըն-
տա օգուստուղուճա նէզարէն , մե-
սէլէի մէզբիւրէ հազգընտա զազէ-
թալարտա նէշր օլընան մալիւմաթը
կէօնակէօնա ըրաղմէն , մէզբիւր մե-
սէլէ հէյնուզ թէպիլիէնէ գարիպ
պիր հալ քէսպ իթմէմիշ տիր , իմ
թիւաղ թալէպիլիտէ պուլուճան Մ.
Պէրթէ իլէ Մ. Բրէսէլին տէրմիւնան
իթմիլիլէրի շէրաիթ արասընտա խայ-
լի ֆարգ օլուրը մէրվի օլուպ , պուլ-
լարըն հանկընըն շահանը գապուլ
օլուրը նաֆաա նէզարէթիլմէ թէտ-
ղըք իտիլմէքտէ տիր :

Մ. Գօլաս իլէ Տուեուլը Ումուլի-
իէ իտարէ մէճիսի Ինկիլիդ ազապը
Մ. Գայեար թարաֆընտան պէեան
օլընան թէքիլիլէրին կէրուէէ ալըն-
տըրը պաղը զազէթալարտա եաղըլ-
մըլ իսէտէ , պու իբի զաթըն իթմի-
եաղ ախըրնա չալըյմագտա պէր տէ-
վամ օլուրըլարը խապէր ալընմագտա
տըր :

Բէթիլիլիլ Լա թիւրքի զազէթապը
Մ. Բրէսէլ իլէ Պափիէրա գրալընըն
մապէն ինճիլիլէրիտէն Պարօն տը Սթա-
աֆըն զանէթ միւթէպէր Ալման թէ-
էսիսաթը մալիլիէնէն վէքեալէթ
իթմէքտէ օլուրըլարընը , վէ շէրաի-
թին պէղանէթ միւսախտ օլուրընը
պէեան իտիէօրպար իսէտէ , պանդա-
լարըն իսմի վէ տէրմիւնան օլընան

